

ՊԱՇԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՅ՝



Ինչքան նշանաւոր տեղ է ըր-
նում ընտանիքը բարոյական
աշխարհում կազմելով նորա
սկիզբն ու հիմունքն այնքան
բարձրացրեց և սրբագործեց
նորան քրիստոնէութիւնը։ Ար-
դէն միակնութեան հաստատութիւնը տուաւ
ամուսնութեան այն դիրքն որ համապատաս-
խանում է ընտանիքի էութեան։ Ինչպէս
սուրբ է ընտանիքն այնպէս և քրիստոնէու-
թիւնը սրբութեան վրայ հիմնեց նորա կաղ
մակերպութիւնը։ Միակնութեամբ հաւատա-
րութիւն մոլորեց երկու սեռի անհատների
մէջ և ապա պատկն եկեղեցական ու խոր-
հուրդ դարձնելով դրաւ նորան աստուա
ծային արքայութեան փոքրիկ պատկերի մէջ։
Պատկն նշանակութիւնն այնքան մէջ է քրիս-
տոնէական վարդապետութեան մէջ, որ Պօ-
ղոս առաքեալն ասում է. «Առք սիրեցէք
զկանայս ձեր որպէս և Քրիստոս սիրեաց
զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նո-
րա . . . որ սիրէ զին իւր զանձն իւր սի-
րէ. զի ոչ որ երբէք ատեայ զանձն իւր այլ
անուցանէ և դարմանէ զնա որպէս և Քրիս-
տոս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ
նորա, ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա։
Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր
և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին եր-
կորին ի մարմին մի խորհուրդս այս մեծ է,
բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի»։
Պօղոս առաքեալն այնքան բարձրացնում է
պատկն խորհուրդն որ մինչև անգամ այր և

կնոջ նմանեցնում է Քրիստոսին և իւր եկե-
ղեցուն։ Այդ նմանութեան սկիզբն դրաւ
Քրիստոս երբ ինքեան փեսայ անուանեց և
իւր աշակերտներին մանկունք առագաստի ու
Ուստի և իրաւամբ շնչուում է առաքեալը թէ՛
«մեծ է խորհուրդս այս» մինչդեռ մենք կա-
րող ենք ասել՝ մեծ է և առաւել քան մեծ
է, որովհետեւ ոչ մի սրիշ բան չէ արժանա-
ցել այդ բարձր նմանութեան։ Միմիայն այդ
սուրբ միութեան մէջ է, որ կարող ենք ա-
սել՝ «նին՝ փառք առն իւրոյ է»։ Տղամարդի
յարաբերութիւնը զէպի իւր կինն այնքան
սուրբ է, նորա սէրն այնքան բարձր է, որ-
քան սուրբ է և բարձր Քրիստոսի վերաբեր-
մունքը զէպի եկեղեցին, ուստի և «Պարտին
արք սիրել զիրեանց կանայս իբրև զիրեանց
մարմինս . . . զի ոչ որ երբէք ատեայ զան-
ձն իւր այլ անուցանէ և դարմանէ, որպէս
և Քրիստոս զեկեղեցի»։

Եկեղեցին ճանաչեց ամուսնական կողակ-
ցութեան սրբութիւնն, ուստի և չտատամնեց
ընդունելու Ա. Գրքի ժողովածուի մէջ այն
բանաստեղծական գեղեցիկ գրուածքն, որ
իրապէս գովասանում է տղամարդի և կնոջ
սէրն ու գեղեցկութիւնը. այդ այն է՝ որ
կոչւում է «Երգ երգոց» (Նիւր հաշիբիմ),
այսինքն ամենալաւ երգ։ Հարկաւ միայն
սուրբ զգացմունքներով պէտք է կարգաւ այդ
գրուածքն, որ մշինութիւնների մէջ վերա-
բերում է թէ Քրիստոսին և եկեղեցուն և թէ
ամուսիններին։ Եթէ չկայ սուրբ զգացմունք
մարդու էութեան համապատասխանող բա-
րեկիրթ զգացմունք, ամենամեծ սրբութիւնն
անգամ խաղ կդառնայ։

Այդպէս և ս. Գրիգոր Նարեկացին ասում է
իւր համառօտ մեկնութեան մէջ (եր. 393).
«Նաև սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի
ընդ հարսին և հարսին ընդ փեսային, որ
ազատ լինի ի պիղծ խառնից, չէ օտար ի
Հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Քր-
իստոս և յեկեղեցի աւարտի»։

«Արդ՝ որ զսուրբ ամուսնութիւն պիծէ

պիղծ խառնակութեամբ և չոր գործովք՝ զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ, և զՔրիստոս անարգէ, որ այժմ օրինակն է ։

Ուստի և նոյն երանելին գովարանումէ եկեղեցին իւր մի գեղեցիկ գանձի մէջ (եր. 3:1) Հարսանեկան թառերով. «Աւրախ լիւր գշխոյ Հարսն պանծալի, պոսակաւոյ, մեծ զարմանուհի. բազմազաւակ կուսութեամբ բերկրեալ ։

«Բարունն լուսոյ հզօր թագաւոր Քեոսյն երկնաւոր՝ անձառ խորհրդով ի հանդէս խնձողից պարու կարգեաց քեզ կանոնս անփոփոխելիս ։

Ս. Գրիգոր Տաթևացին մի առ մի բացատրումէ պոսակի բարձր նշանակութիւնը. նա պարզումէ խորհուրդն տեսելով՝ «խորհուրդ է ծածկելոյ իրաց յայանութիւն» այսինքն այն գաղտնիքն, որ մենք չենք տեսնում, ներկայանումէ մեզ իրական արտայայտութեամբ ։ Այդ իրական արտայայտութիւնը մեկնումէ նա տեսելով իւր «Սմբան քարոզներում» (էջ. 199). «Եւ այս մայմնաւոր հարսանիքս է խորհուրդ հոգեւոր հարսանեացն և միաւթեան Հոգւոյս առ Աստուած, որպէս ասէ առաքեալն» ։ Ուստի և խնամախօսներին նմանեցնումէ մարգարէներին, իսկ փեսաւէրներին ու հարսնածուներին նմանեցնումէ առաքեալներին և նոցա հետևող հայրերին ։ Եւ «Նշան մատանւոյն՝ հաւատն է, որ դնի ի մատն՝ որ է զանազանող գործոյն» Մատի վրայ է մատանին, սակայն նա ևս ընդարձակ նշանակութիւն ունի ։

«Մատանին է ի մատն յայն՝ որ ունի զերակ որտին. նոյնպէս և հաւատք մ'ը՝ առ Քրիստոս է ջերմ սիրով որտի հաստատեալ ։ Եւ ինչպէս մատանին օղակ է և ծայր չունի, այնպէս էլ ամուր է ամուսնութեան կապակցութիւնը ։ Ոսկի է մատանին գոցա կապողն, ոսկու նման մաքուր պէտքէ լինի և երկուսի սէրը ։

Հայատառնեայց Եկեղեցին ձանաչելով պրտակի սրբութիւնը, գործնականապէս էլ հաստատեալ մէջ չէ ընկնում՝ արգելելով

հոգեւորականներին ամուսնանալ, այլ նա սկզբից որոշել է երկու դաս—կուսակիւսն և ամուսնացեալ, որով մի որոշ կարգ է գրել իւր պաշտօնեաների մէջ ազատ՝ անհասանքի կամայականութիւններից, Գորանով սրբապարծում է թէ պսակն և թէ ինքնազոհութեան բարձր առաքինութեան ճանապարհ է թայնում առ այդ կոչուածների համար ։

Եւ ինչպէս որ ճշմարտութիւն է աշխարհականների համար թէ «առանց կնոջ աւեր է տունն, և տան շինութիւն կինն է», և «տուն ունիս» ասելով հասկանում են պսակուած լինելը ։ Այնպէս էլ կուսակիւսն Եկեղեցականի համար տունը Եկեղեցին է ։



ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Պատկի ս. խորհուրդ լինելը ցոյց է տալիս արդէն, որ ամուսնութիւնը չի կարող մասնաւոր անհատական նպատակ ունենալ. եթէ այդպէս լինէր, նա չէր համեմատուիլ Քրիստոսին և Եկեղեցուն ։ Այլ ինչպէս որ մեծ նշանակութիւն ունի Քրիստոսի և Եկեղեցու կապակցութիւնն Աստուծոյ արքայութեան համար, այնպէս էլ ամուսնական ընտանեկան կեանքը մի անհրաժեշտ տարր է Աստուծոյ արքայութեան իրականացման համար ։ Ընտանիքը պէտքէ լինի բարոյական աշխարհի փոքրիկ նկարը կամ մանրաշխարհի ։

Վերլուծելով ամուսնութեան այդ ընդհանուր նշանակութիւնը, կատանալք ամուսնութեան նպատակի որոշումը, կնոջ ստեղծագործութիւնն եղաւ ըստ Աստուծոյ տնօրէնութեան՝ թէ «ոչ է բարւոր մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա» ։¹ Արեւմտեան տղամարդի և կնոջ կենակցութիւնը տարր է կազմում Աստուծոյ արարչական տնօրէնութեան ։ Քրիստոս եկաւ փրկելու մարդկութիւնն և յառաջ վարելու

1 Ս. Գ. Տաթևացի, անդ էջ. 197.

2 Ծանոթ. Բ. 18.

դէպի Աստուծոյ արքայութիւնը՝ Նա ինքն
ասումէ՝ վերստին այն ինչ որ ի սկզբանէ
հաստատուել էր՝ սակայն և յիշումէ՝ այն
աւարքնութիւնն, որ իրագործում են նորա-
ւորոնց տուեալ է և որո՞ք և «են ներքինի»
որ զանձինս իսրեանց արարին ներքինին մո-
տին արքայութեան երկնից՝ և Այստեղից
արդէն ճշգրտման օր Գրիգոր Տաթևացու
որոշած երեք նպատակները՝ մէկ՝ «առ ի
խորշելոյ ի պառնկութենէ» երկրորդ՝ որպէս
ծնութեան համար, և երրորդ՝ ցանկութիւնը
գտնելու և ամօքելու համար:

Եւ զիտելով այդ երեք կէտերը, կտես-
նենք որ թէ որպէս ծնութիւնն և թէ միւս
երկու նպատակները միջոց են ապիւյ մար-
դուն Աստուծոյ արքայութեան համար գոր-
ծելու և այդ իրականացնելու: Որչափ հաս-
կանանք տղամարդի և կնոջ կենակցութեան
նշանակութիւնն, այնքան սուրբ կապահեր
սիրոյ յարաբերութիւնն, որպէս զի օր ըստ
օրէ կարողանանք մեր աստուածապիւր կոչ-
ման ծառայելու: Մարդու կոչումն է՝ կամ
ամուսնական կենակցութեամբ և կամ ան-
նախնիրութեամբ՝ միջոց գտնել առաւել յա-
ջողութեամբ Աստուծոյ արքայութեան հա-
մար գործելու:

Այդ նպատակով նա է միայն դիմում ա-
մուսնական կենակցութեան, ով որ զգումէ
միայնակ գործելու թուլութիւն և անյարմա-
րութիւն և կարօտումէ ամուսնական օգնա-
կանութեան կամ գործակցութեան: Միայն
թէ սուրբ է նպատակը, որքանութեամբ էլ
պէտքէ ձգտել դէպի այն և սուրբ պաշել
այն ընթացքն, որ տանում է դէպի այդ նը-
պատակը: Որչափ մեղանչէ մարդ այդ կենա-
ցութեան մէջ՝ չկատարելով բրիտանէական
ամենապարզ առաքինութիւններն, որպէս
սէր, ներողամտութիւն, պարկեշտութիւն,
հիգութիւն, հաւասարութիւն և ընդ այնքան

մեղանչում է նա յիշեալ բարձրագոյն նպա-
տակի դէմ՝ և ինքն ինքեան դատապարտում:
Աստուած միայնումէ երկուսին և մի մար-
մին գործնում՝ միասին էլ պէտքէ գործեն
և ասպեն, և ինչպէս «Քրիստոս սիրեաց զե-
կեղեցին և զանձն իւր մատնեաց վասն նո-
րա» այնպէս էլ աղամարդը պէտքէ սիրէ
իւր կնոջ կատարեալ անձնազոհութեամբ, զի
«որ սիրէ զին իւր՝ զանձն իւր սիրէ» իսկ
իւր անձն առողջ անառն մեղապարտն է
Աստուծոյ առաջ իբրեւ Աստուծոյ շնորհն ար-
համարհող: Նոյն յարաբերութիւնը պէտքէ
պահէ և կինը: Երկուսն էլ իրար ուղղող են
և բժշկող: Մի խօսքով՝ տղամարդի և կնոջ
յարաբերութեան կատարելատիպը պէտքէ
լինի Քրիստոսի և իւր եկեղեցու յարաբե-
րութիւնն, որպէս զի կարենան մայելիլ Հա-
յոց եկեղեցու օրհնութեան շնորհները:

ԱՍՏՈՒՄԵՆԵԼԵԼՆ.

(Կը շարունակուի):

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԵԼԵ ՇՊԵԼԻ ԲԵՂԳԻՆՈՐ ԻՆՆԵԼՈՒ ՀՈՄԵՐ:

ԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ.

Ամեն կողմից ամենաբաժանաւոր մար-
դիկ աշխատասեր, արդարասէր և խիստ
ազնիւ մարդիկ են՝ նոքա արժանի են ընդհա-
նուր յարգանքի: Այսպիսի մարդիկներին չէ
կարելի չը հաւատաչէ կարելի չարել չէ կա-
րելի չցանկալ նոցա նման դառնալ: Նոքա
են պահպանում ամեն լաւ և բարի բան
աշխարհում և եթէ նոքա չլինէին, ապրել
ևս չարժէր:

Ո՛չ որ պարտաւոր չէ հարուստ խելացի

1 Մատթ. ԺԹ. 11, 12, Տեա. և ՀԹ. Է. 8—9.

2 Բայց ամուսնացն և սրբացն ասեմ. լաւ է նոցա
թէ կայցեն իբրեւ զիս: Ապա թէ ոչ ունիցին Ժոյժ,
ամուսնացին, զի լաւ է ամուսնանալ քան զճեռնուլ: